

կըրտութեան եկեղեցին շինուած էր Յորդանանի անդիլի կողմը, Բեթարրայի մօտ. այս մասին Արզուլֆեպիսկոպոս՝ որ 670 ին այցելած է Յորդանան՝ ունի հետեւեալ շահեկան տեղեկութիւնները. «Գետին եզերքին վրայ կը գտնենք քառակուսի եկեղեցի մը՝ որ կ'ըսեն թէ շինուած է այնտեղ՝ ուր կը պահուէին ըզգեստները մեր Փրկչին որ մկրտուեցաւ: Այս եկեղեցին հաստատուած էր չորս սիւներու և քարէ կամարներու վրայ, բայց ջուրին վրայ ըլլալուն՝ բնակելի չէր, վասնզի ջուրերը ներքեւի կողմէն պատած էին: Կըմինտրով ծածկուած էր ան, եւ հիմը շինուած էր կամարակապ քարերով»:

Հայերն ալ շատ կանուխէն եկեղեցի ունէին Յորդանանի ափերուն վրայ. որոշապէս կը վկայէ Մովսէս Կաղանկայտուացին իր գիրքին մէջ (էջ 423)՝ ի հարկէ առնելով պահանատես հայ ուխտաւորէ մը, «... Ուր Փրկիչն ավրեցաւ, յորում եկեղեցի սագաշեկ խաչսնանակն յարմարեալ՝ 80 կանգուն երկայն, 80 շայն. երեք սեղանս խորհրդոյ եւ պասարսոց լիսցի»: Անաստաս վանականը իր վանօրէից ցուցակին մէջ կը յիշէ թէ Է. դարուն դաւանական խլրտումներու ժամանակ՝ Երուսաղէմէն մաս մը վանականներ հաստատուած են Յորդանանու եզերքը: Մինչև 1813 գոյութիւն ունեցած է Յորդանանու հայ եկեղեցիին տեղւոյն աւերակը: Բաց աստի, Աստուածայայտնութեան տօնին Յորդանանու եզերքը պաշտամունք կատարելու աւանդական սովորութիւնը կը հաստատուի ա՛յն ձեռագիր ծաշոցով (Թ. 271) զոր Ստեփանոս երկայն գրչագրած է Երուսաղէմի Ս. Հրեշտակապետաց վանքին մէջ՝ Դաւիթ պատրիարքին համար: Ձեռագրին յիշատակագրին նայելով, երբ Միաբանութիւնը Աստուածայայտնութեան տօնին